նախկին բնակութիւնն էր ըստ քերթողաց՝ հիւրա-
տեաց և տխրագին գաւառ մը, խիտ առ խիտ ան-
տառաք և արեգական ճառագայթից անթափանց
մշտնջենաւոր միգով և մառախղով պատած։ Հա-
լածեալք ի Սկիւթաց ի Կիմմերեան Վոսփորէ, ե-
լան ի խնդիր նորոյ բնակութեան. և ընդ Եւքսի-
նեանն անցնելով ի Պոնտոս, մերձաւոր ազգաց և
ժողովրդոց վրայ ինկան ահաւոր արշաւանաք, և ըստ
Հերոդոտեայ՝ յարձակելով ի Փոքրն Ասիա, տիրե-
ցին Կիաքսարայ թագաւորութեան. ուր քսանևութ
տարի իշխելով՝ վերջապէս հալածուեցան յԱլիա-
դէս թագաւորէն Լիւդիոյ։

Տաւրիկեան թերակղզւոյն նախնական ժամանա-
կաց կը վերաբերին Եւքսինեան Պոնտոսի այլ և
այլ քաղաքներն, որ վաճառականական և քաղա-
քական պատմութեան մէջ կարևոր և ազդեցիկ դեր
մը ունեցան. ասանկ՝ Պանտիկապէա (այժմու
Կերչ), Թէոդոսիա (Կաւա կամ Քէֆէ միջին դարուց),
Քերսոն՝ որոյ դիրքը հիմակուան Սեւաստապոլի
մոտերն կ'իյնայ։

Ժամանակ անցնելէն ետքը՝ Պանտիկապէա, որ
Վոսվորոս սկսեր էր կոչուիլ՝ նեղուցին վրայ ունե-
ցած դրիցը պատճառաւ, յոնիական փոքրիկ թա-
գաւորութեան մը աթոռ եղաւ, ու կամաց կամաց
տարածեց ընդարձակեց իր իշխանութիւնն բովան-
դակ Քերսոնեսի և Եւքսինեան ծովու հիւսիսակող-
ման գաւառներու վրայ, ուր բազումք յիշխողաց
սկիւթացի ծագումն ունէին։

Մեծ ու զգալի եղաւ յոյն գաղթականութեանց
քաղաքակիրթ և բարերար ազդեցութիւնն այն կող-
մերու վայրենի բնակչաց վրայ. որով հին ժամա-
նակաց բարք և սովորութիւնք կրեցին իրենց կեր-